

**Է. ԱՂԱՅԱՆԸ ԲԱՌԱԳԵՏ, ՍՏՈՒԳԱԲԱՆ
ՆԵԿՏԱՐ ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ
Ավագ գիտաշխատող, ք.գ.թ., դոցենտ
inslcouncil@sci.am

DOI: 10.57236/1829-0183-2023.1(28)-11

Համառոտագիր:

Հոդվածը նվիրված է հայ մեծանուն լեզվաբան Է. Աղայանի բառագիտական-բառաքնական և ստուգաբանական ուսումնասիրություններին, որոնք ամփոփված են «Բառաքնական և ստուգաբանական հետազոտություններ» ժողովածուում (1974) և «Ընդհանուր և հայկական բառագիտություն» (1984) աշխատության մեջ: Հեղինակն առաջարկում է նոր ստուգաբանություններ հայերենի մի շարք արմատների համար, որոնք համարվել են կամ անհայտ ծագման, կամ փոխառություններ: Նա կատարում է նաև որոշ բնիկ հայերեն և բարբառային բառերի ստուգաբանական ճշգրտումներ:

Բանալի բառեր և բառակապակցություններ՝ Հնդեվրոպական լեզուներ, նախալեզու, նախաձև, բառագիտություն, ստուգաբանություն, արմատ, բարբառային բառեր:

**E. AGHAYAN – LEXICOLOGIST, ETYMOLOGIST
NEKTAR SIMONYAN**

RANAS, Institute of Linguistics after H. Acharyan,
Senior Researcher. PHD, Associate Professor

Abstract.

The article is devoted to the distinguished linguist E. Aghayan's lexicological and etymological researches, that are placed in the book "The Lexicological and Etymological Studies"(1974) and in "The General and Armenian lexicology"(1984). He offers Indo-European origin for number of Armenian roots, that were considered of unknown origin or borrowings. He also clarifies etymologies of some roots and dialectal words.

Keywords and phrases: Indo-European languages, protolanguage, prototype, lexicology, etymology, roots, dialectal words.

Институт языка им. Р. Ачаряна НАН РА,
Старший научный сотрудник, к.ф.н., доцент

Статья посвящена лексикологическим и этимологическим изысканиям выдающегося лингвиста Э.Б.Агаяна, которые помещены в сборнике "Лексикологические и этимологические исследования" (1974) и в труде "Общая и армянская лексикология"(1984).Он предлагает индоевропейское происхождение для ряда армянских корней, которые ранее считались или неизвестного происхождения, или заимствованиями, также делает этимологические уточнения некоторых корней и диалектных слов.

Լրագրավ մեծանուն լեզվաբան Է. Աղայանի ծննդյան 110-ամյակը:

Է. Աղայանը ծնվել է 1913 թ. մարտի 16-ին Մեղրիում: Սկզբնական կրթությունն ստացել է տեղի միջնակարգ դպրոցում: 1933 թ. ընդունվում է Երևանի պետական համալսարան՝ աշակերտելով ժամանակի այն պիսի նշանավոր հայագետների, ինչպիսիք էին Հ. Աճառյանը, Մ. Աբեղյանը, Գ. Ղափանցյանը: 1938թ. վարտել է համալսարանը և ընդունվել ասպիրանտուրա: 1941 թ. «Մեղրու բարբառը» ատենախոսության համար նրան շնորհվում է բանասիրական գիտությունների թեկնածուի, իսկ 1945թ. «Հայ լեզվաբանության պատմություն» աշխատության համար՝ բանասիրական գիտությունների դոկտորի գիտական աստիճան: 1939 թվից մինչև իր երկրային կյանքի վավարտը դասախոսել է Երևանի պետական համալսարանում՝ զուգակցելով գիտնականի բեղուն գործունեությունը մանկավարժի, գիտական կադրեր պատրաստելու շնորհակալ աշխատանքի հետ:

Լայն ու բազմազան է եղել Է. Աղայանի գիտական հետաքրքրությունների շրջանակը՝ ընդհանուր և համեմատական լեզվաբանություն, բարբառագիտություն, լեզվի պատմություն, բառագիտություն և բառարանագրություն, արևելյան բանասիրություն և գրականություն, տերմինաբանություն, տոմարագիտություն: Է.Աղայանի «Լեզվաբանության ներածությունը» (վերջին հրատարակությունը՝ «Լեզվաբանության հիմունքներ») լեզվաբանության տեսական հարցերին, լեզվաբանության հիմնախնդիրներին նվիրված անփոխարինելի ուսումնական դասագիրք-ծեռ-

նարկ է լեզվաբանների, բանասիրական ֆակուլտետների ուսանողության համար:

Է. Աղայանի գիտական ժառանգության մեջ իր ուրույն տեղն ունի «Արդի հայերենի բացատրական բառարանը», և անգնահատելի են նրա արժեքն ու կարևորությունը հայ բառարանագրության պատմության համար: Բառարանում ընգրկված են 135600 բառ և 11000 դարձվածային միավոր: Բառարանի առաջաբանում հեղինակն անդրադառնում է իր կազմած, Ս. Մալխասյանցի «Հայերեն բացատրական բառարանի» և Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի «Ժամանակակից հայերենի բացատրական բառարանի», Հ. Բարսեղյանի «Հայերեն ուղղագրական-ուղղախոսական, տերմինաբանական բառարանի» մեջ ընդգրկված բառաքանակի տարբերությունների պատճառներին: Է. Աղայանը իր բառարանի առաջաբանում գրում է, որ «...մեր արդի գրական լեզվի բառապաշարը պատմական կամ ծագումնաբանական տեսակետից կարելի է բնութագրել բառամթերային հետևյալ շերտերով» [1, էջ IX]: Այնուհետև թվարկում է այդ շերտերը՝ համահայկական բառեր, համագրական բառեր, նոր գրական բառեր, մասնավոր գրական բառեր, հին կամ գրաբարյան բառեր, աշխարհաբարյան բառեր, բարբառային բառեր [1, էջ IX]: Նկատի ունենալով լեզվի զարգացման գործընթացի արտահայտությունն արտահայտող բառային տարբերակները՝ նա իր բառարանում ընդգրկված բառերը բաժանում է հետևյալ կարգերի՝ միջուկային բառակազմ, տարբերակային բառակազմ՝ սոցիալական, գործառական, պատմական, ներլեզվական ենթատեսակներով: Ներլեզվական տարբերակներ է համարում փոխատեղական համանունները, տարահիմք համանիշները, հոդակապային, հնչյունափոխական, ձևաբանական տարբերակները, հավելադրական բարդությունները, նորակազմությունները [1, էջ XI-XII]: Եվ պատահական չպետք է համարել, որ բառարանի կազմությունից հետո նա գրում է «Ընդհանուր և հայկական բառագիտություն» աշխատությունը: Այս աշխատության մեջ նա անդրադառնում է ընդհանուր բառագիտության տեսության այնպիսի կարևոր հարցերի, ինչպիսիք են բառի սահմանումը և բնութագրումը՝ նշելով բառի՝ որպես լեզվական միավորի առանձնացման հիմնական սկզբունքները, բառերի դասակարգումը ըստ նրանց արտահայտած իմաստների և ձևի: Ընդհանուր բառագիտության վերաբերյալ դիտարկումներից հետո հեղինակն անդրադառնում է հայերենի բառագիտության առանցքային հարցերի

քննությանը: Գրքում առանձին բաժիններ են նվիրված ժամանակակից հայերենի բառապաշարի ծագումնաբանական, համաժամանակյա դասակարգմանը, բառային կազմի զարգացման և հարստացման աղբյուրների և ուղիների, բառակազմության՝ բառերի ձևայթաքանական, ձևաբանական վերլուծության, և տերմինագիտության հարցերին:

Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետում Է. Աղայանը (միակը) հայերենի համեմատական քերականություն է դասավանդել: Նրա «Պատմահամեմատական մեթոդը լեզվաբանության մեջ» (1957 թ.) գրքույկը հայ լեզվաբանության մեջ այդ մեթոդի տեսական և գործնական սկզբունքները կուռ և ամբողջական ներկայացնող միակ ձեռնարկն է: Է. Աղայանը, աշակերտելով Աճառյանին, չէր կարող ի մոտո չգբաղվել ստուգաբանության հարցերով: 1974թ. հրատարակվում է Է. Աղայանի «Բառաքննական և ստուգաբանական հետազոտություններ» գիրքը: Դա ժողովածու է, որում զետեղված են նրա՝ տարբեր հանդեսներում, գիտական պարբերականներում հրատարակած ստուգաբանությունները և բառաքննական դիտարկումները: Աղայանը այդ ժողովածուի առաջաբանում շատ կարևոր և արժեքավոր մտքեր է արտահայտում բառաքննական և ստուգաբանական հետազոտություններ կատարելու վերաբերյալ: Նա գրում է, որ հայկական բառաքննության հիմնական խնդիրն է «...որոշել մեր հին մատենագրության մեջ հանդիպող այն բառերի ու բառակապակցությունների իսկությունը, իրական ձևն ու իմաստը, որոնք այս կամ այն պատճառով անստույգ կարող են համարվել» [2, էջ 6]: Իսկ ստուգաբանությունը «... զբաղվում է լեզվական միավորների ծագման, նրանց նախնական ձևի և իմաստի, լեզվական դերի ու գործառության և դրանց հետագա զարգացման ու փոփոխությունների լուսաբանությամբ» [2, էջ 7]: Ստուգաբանություն կատարելիս անհրաժեշտ է պարզել բառարմատների, ածանցների ու քերականական ձևորդների ծագումն ու զարգացման ընթացքը՝ պատմական մոտեցումով: Պատմական հայեցակետը գիտական ստուգաբանության հիմքն է: Դա նշանակում է, որ ստուգաբանությամբ զբաղվողը լեզվական յուրաքանչյուր միավորի քննության ժամանակ պետք է կատարի պատմական քննություն՝ պարզելով այդ միավորի նախնական իմաստը, ձևը, նկատի ունենա պատմական հնչունաբանության և պատմական իմաստաբանության տվյալները, համեմատի հ.-ե. այլ լեզուների համապատասխան արմատների հետ: Այս սկզբունքները, իբրև նաև խորհուրդ-ցուցումներ,

միշտ պետք հաշվի առնվեն, և դրանցով պետք է առաջնորդվեն այն բոլոր լեզվաբանները, որոնք հավակնում են զբաղվել ստուգաբանությամբ: Իսկ Աղայանն ինքը նշում է, որ «...առաջնորդվելով այս սկզբունքներով՝ տարիների ընթացքում աշխատել ենք ստուգաբանել հայերեն բազմաթիվ բառեր և հրատարակել գիտական պարբերականներում» [2, 15], որոնք ի մի է բերել այդ գրքում: Գրքում զետեղված է 101 բառահոդված, բայց մեր հաշվումներով քննված արմատների և բառերի քանակը 618 է, որովհետև մեկ բառի կամ արմատի քննության ժամանակ նա անդրադառնում է նաև դրանց ձևային և իմաստային տարբերակներին: Այդ բառահոդվածները կարելի է դասակարգել՝ առանձնացնելով անհայտ ծագման համարված, չստուգաբանված բնիկ՝ հ.-ե. ծագման արմատների ստուգաբանություններ, ստուգաբանական ճշգրտումներ, փոխառյալ բառերի, բարբառային բառերի քննություն: Է. Աղայանը նոր ստուգաբանություններ է առաջարկում առաւօտ, կոռ, շերտ, շեղբ, նկուղ, քուք, մուղ, տող, տաղբառերի համար: Ստուգաբանական ճշգրտումներ է առաջարկում բարակ(շուն), գորտ, ստահակ, հարեւր/հարիւր և այլ բառերի համար (մեր նպատակը չէ թվարկել բոլորը): Հետաքրքիր է պարեգօտ բառի ստուգաբանությունը: Հ. Աճառյանն այն համարում է փոխառություն հին պահլավերենից (paragauḍa) [3:4, էջ 59]: Համանման կարծիք է հայտնում և Գ. Ջահուկյանը [4, էջ 630]: Հ. Հյուբշմանը պարեգաւտք «երկար հագուստ» բառի համար նշում է, որ Լագարդը այն կապում է gauti հայերեն գաւտի բառի հետ, իսկ ինքը ենթադրում է, որ այն անստույգ ծագման, կամ Արշակունիների ժամանակի փոխառություն է (...so ist es arsaacidisches Lehnwort, also aus dem Persischen zu erklären und dann von arm. Gauti “Gurtel” zu trennen) [5, էջ 227-228]: Է. Աղայանը, բերելով բառի պար և գաւտի բաղադրիչների իմաստները և կազմությունը, ինչպես նաև պարսկերեն d-հայերեն ր համապատասխանությունը (varagauḍa - վարագոյր), այն համարում է զուտ հայկական կազմություն և եզրակացնում է, որ իրանական paragauḍa-ն է փոխառություն հայերենից [2, էջ 132-135]: Է. Աղայանը պարսկերեն d-հայերեն ր համապատասխանության համար բերում է Է. Բենվենիստի՝ հայերեն վարագոյր բառի ստուգաբանությունը (varagauḍa - վարագոյր), և հավելում է, որ եթե պարեգօտ-ը պարսկական փոխառություն լիներ, հայերենում պետք լիներ պարագոյր: Հայերենում կան պարսկերենից փոխառված այլ բառեր ևս, որոնցում պարսկերենի d-ի դիմաց հայերենն

ունի ռ.հմմտ. պարսկերեն *apeḍat* – հայերեն ապիրատ: Հարկ է նշել, որ Լ.Շ. Հովհաննիսյանը «Հայերենի իրանական փոխառությունները» աշխատության մեջ բերում է իրանական *d*-ի համապատասխանությունները տարբեր դիրքերում և նշում է, որ «*d*-ն միջձայնավորային դիրքում տալիս է –*p*–...**haḍazat* –հարազատ» [6, էջ 84]: Համանման օրինակներ կան և Հ.Հյուբշմանի «Հայագիտական ուսումնասիրություններ» գրքում [7, էջեր 371, 402]:

Շատ կարևոր են բարբառային բառերի քննությունները: Նա հնդեվրոպական ծագում է վերագրում հայերենի բարբառներում վկայված ցալքուն «ջրի ցայտ, շիթ, ջրալի ցեխի ցայտ», քառանք՝ Մեղրու բարբառում՝ քառնիլ «տաք-տաք՝ զայրացած խոսել, վիճել, խոսքով կռվել», բողջոց «վերք, պալար» բառերին՝ հնչյունական և իմաստային զուգահեռներ ներկայացնելով հնդեվրոպական այլ լեզուներից: Է.Աղայանը, նույնիսկ առօրյա խոսակցությունների ժամանակ լսելով իրեն անծանոթ որևէ բառ (մի անգամ Մեղրի այցելած ժամանակ մի տարեց կին նրան ասում է, որ ջահելները «հըրըմօշտ ըն արած մեղրեցիների լեզուն») [2, էջ 99], մտածում է դրա ծագման մասին. լեզվաբան-բառագետի պրպտումները տալիս են դրա պատասխանը. նա Նիզամիի «Խոսքով ու Շիրին» վիպերգը վերընթերցելիս մի նախադասության մեջ նկատում է, որ *farāmušt* բառը գործածվել է «մոռացավ» իմաստով: Պարսկերենի տարբեր բառարանների տվյալները հաշվի առնելով՝ նա Մեղրու բարբառի հըրըմօշտ բառը առանց տարակուսանքի համարում է իրանական փոխառություն: Է. Աղայանի բառաքննական և ստուգաբանական հետազոտությունները ցույց են տալիս, թե ինչպիսի մանրակրկիտ, բազմակողմանի հնչյունական, իմաստային, պատմական քննություն է կատարվել, և այդ սկզբունքներով ու չափանիշներով պետք է առաջնորդվել բառերի, արմատների նման քննություն կատարելիս:

Գրականության ցանկ

1. Աղայան Է.Բ., Արդի հայերենի բացատրական բառարան, «Հայաստան» հրատարակչություն, Ե., 1976, 1615:
2. Աղայան Է.Բ., Բառաքննական և ստուգաբանական հետազոտություններ, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Ե., 1974, 167:
3. Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, ԵՊՀ հրատարակչություն, Ե., հ.4, 1979, 674:

4. Զահուկյան Գ.Բ., Հայերեն ստուգաբանական բառարան, «Ասո-
ղիկ» հրատարակչություն, Ե., 2010, 819:
5. Հյուբշման Հ., Հայերենի քերականություն, ԵՊՀ հրատարակչու-
թյուն, Ե., 2003, 578:
6. Հովհաննիսյան Լ.Շ., Հայերենի իրանական փոխառությունները,
ՀԽՍՀ ԳԱ հրատարակչություն, Ե., 1990, 302:
7. Հյուբշման Հ., Հայագիտական ուսումնասիրություններ, ԵՊՀ
հրատարակչություն, Ե., 2004, 520: